

Արմենուհի ԱՎԱԳՅԱՆ

ՍԵՆՈՒ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Լեզուն մտածողության արտահայտման միջոց է, որով դրսևորվում են այն կրող ժողովրդի (ազգի կամ ցեղի) լեզվամտածական գործունեությունը, տվյալ լեզվին բնորոշ առանձնահատկությունները: Լեզվական նյութը հնարավորություն է տալիս պարզելու կոնկրետ ժամանակաշրջանում կամ ընդհանրապես այդ լեզուն կրող ժողովրդի հասարակական և սոցիալական զանազան հարցեր: Այս տեսակետից կարևոր է հայերեն *անուն-ազգանուններում* սեռի քերականական կարգի դրսևորման */իմաստային ու քերականական/* և դրա արտահայտման միջոցների ուսումնասիրությունը, յուրահատկությունների բացահայտումը:

Մեր նպատակն է բացահայտել հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքից ժառանգած քերականական կարգերի՝ լեզվի հետագա զարգացման արդյունքում կրած փոփոխությունները, ձևափոխումն ու ձևավորման կամ արտահայտման յուրահատկությունները, հիմք-լեզվից տարբեր ձեռքբերումներն ու քերականական տարբերությունները:

Ժամանակակից բազմաթիվ հնդեվրոպական ու սեմական (արաբերեն) լեզուներում գոյություն ունի *քերականական սեռի* կարգը՝ ըստ որի էլ արտաքին աշխարհի առարկաները բաժանվում են *արական, իգական, չեզոք* (ռուսերեն, գերմաներեն) կամ *արական, իգական* (ֆրանսերեն) սեռերի, ինչը, եթե լեզուների զարգացման նախնական շրջանում հիմնված էր համապատասխան տրամաբանական կատեգորիայի վրա, ապա հասարակական գիտակցության զարգացման որոշ, ավելի բարձր աստիճանում արդեն իրական սեռի ճանաչման հետևանքով զրկվել է իր տրամաբանական հիմքից և դարձել է սուկ քերականական երևույթ: Այս պատճառով էլ շատ լեզուներ, որոնք նախկինում ունեցել են քերականական սեռ, հետագայում կորցրել են այն, «մինչդեռ *բնական սեռի կատեգորիան* արտահայտելու համար ստեղծել և ստեղծում են նորանոր միջոցներ»¹:

Հայերենի քերականություններում հունաբան և լատինաբան դայրոցի ներկայացուցիչների կողմից անընդհատ փորձ է արվել ներմուծել *սեռի քերականական կարգը*, ինչը բնորոշ է եղել հնդեվրոպական հիմք-լեզվին, բայց հայերենը, ի տարբերություն ցեղակից այլ լեզուների (գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, մասամբ՝ անգլերեն), զարգացման ընթացքում կորցրել է այն:

Հայերենի ինքնատիպ քերականությունների և ընդհանրապես գրաբարի քերականությունների գազաթնակետը *Արսեն Բագրատունու* քերականությունն է: Նրա «*Հայերեն քերականությունից ի պէտս զարգացելոց*» (1852) աշխատությունում (որը բաղկացած է 4 գրքից և 1 հավելվածից) լուրջ ուշադրության է արժանացել սույն հարցը:

Անվան սեռի մասին Բագրատունին նկատում է, որ հայերենում այն արտահայտվում է երեք ձևով՝ *բառիմաստի տարբերությամբ*՝ արու նշանակողը արական սեռի է, էգ նշանակողը՝ իգական, մնացածները՝ չեզոք, *բառիմաստի նույնության* դեպքում՝ ավելացվում է սեռի տարբերություն նշանակող որևէ համապատասխան բառ՝ *այր մարդ – կին մարդ, արու առիծ – մատակ առիծ* և *իգական սեռ են նշում -ուրհի* կամ *-ուհի* (հասարակ և հատուկ անունների համար), *անոյշ*

¹ Աղայան Էդ., *Լեզվաբանության հիմունքներ*, Եր., 1987, էջ 486:

(անուշ – Ա.Ա.) և *դուխտ* (միայն հատուկ անունների համար) բառերն ու մասնիկները²:

20-րդ դարի լեզվաբաններից Ա. Մուրվալյանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ, իրենց ուսումնասիրությունների համար հիմք դարձրեցին հենց Ա. Բագրատունու առաջ քաշած դրույթները*, որոնք ի մի բերելով՝ կարող են եզրակացնել, որ հայերենը չունի սեռի քերականական կարգ, բայց, լինելով հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող, այդ լեզվաընտանիքում որպես ինքնուրույն ճյուղ հանդես եկող լեզու, չի բացառվում, որ գուցե հնագույն ժամանակներում ունեցել է սեռի քերականական կարգ, որը չի պահպանել իր զարգացման ընթացքում, և 5-րդ դարից մեզ ավանդված գրավոր-գրական լեզվում տեսնում ենք արդեն *բնական սեռի տարբերակման միայն իմաստային-բառական դրսևորումներ*, որոնք առկա են նաև այսօր, բայց սեռի տարբերակման առանձին ցուցիչներ չեն եղել և այժմ էլ չկան հայերենում, ինչպիսիք այսօր կան հնդեվրոպական լեզուներից *գերմաներենում (որոշյալ և անորոշ հոդերը* արական, իգական և չեզոք սեռերի համար՝ *der-ein, die-eine, das-ein*, ընդ որում՝ գերմաներենում հոդերից բացի կան նաև *ածանցներ*՝ արական (*er*), իգական (*in*), չեզոք (*chen, lein*) իմաստների համար), *ռուսերենում (он, она, оно)*, *ֆրանսերենում* (արական և իգական սեռերի համար՝ *le* և *la*) նաև լատիներենում, հին հունարենում և այլն, որոնցում հստակորեն տարբերակված են կանացի և տղամարդու սեռ հասկացությունները՝ համապատասխան մասնիկավորման շտրիկով: Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներից *անգլերենը* նույնպես կորցրել է քերականական սեռը՝ այն պահելով միայն դերանվան III դեմքի մեջ (արական՝ *he* «նա, он», իգական՝ *she* «նա, она», չոզոք՝ *it*, իսկ բնական սեռն արտահայտում է հայերենի նման):

Ի մի բերելով փաստերը՝ կարող ենք ասել, որ հայերենում բնական սեռն արտահայտելու համար կա երկու եղանակ՝ *բառակազմական (-ուհի, հնում նաև՝ դուխտ* ածանցները) և *իմաստային-իմաստաբանական* (բառերի իմաստային խմբերը՝ յուրաքանչյուրն իր սեռին ու տեսակին համապատասխան):

Հայերենում կա սուկ մեկ հիմնական բաժանում՝ բառային արտահայտությամբ՝ *կին (աղջիկ)* և *տղամարդ (տղա)*: Նման իմաստային տարբերակում առկա է նաև կենդանական աշխարհի մի շարք անվանումներում, ինչպես՝

կուլ (եզ) – ցուլ, եզ (արու)

մարի (եզ աղավնի) – վարուժան (արու աղավնի) *

սակայն նման տարբերակումը համատարած դրսևորում չունի և ընդգրկում է մասնակի փաստեր:^{**}

Այսպիսով, կարող ենք ասել, որ հայերենը, ի տարբերություն հնդեվրոպական որոշ լեզուների, չի ունեցել բնական սեռի արտահայտման առանձին ցուցիչ(ներ)՝ բացառությամբ պարսկերենից փոխառյալ *-ուհի* ածանցի, բայց ունեցել և պահպանում է *սեռի իմաստային-բառական* տարբերակումը, որը, սակայն, չի կարող հիմք հանդիսանալ հայերենում արհեստականորեն քերականական սեռի

² Բագրատունի Ա., *Հայերեն քերականությունիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 37-41:*

* Տե՛ս Մուրվալյան Ա., *Հայոց լեզվի բառային կազմը*, Եր., 1955, էջ 303-304, Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Եր., 1989, էջեր 142, 189, 310:

* Հայերենում սեռի քերականական կարգի հարցին, արտահայտման միջոցների խնդրին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներում:

** Տե՛ս Ավագյան Ա., *Գենդերը և լեզվաբանությունը, Ուսանողների և երիտասարդ դասախոսների VI հանրապետական խորհրդածողովի նյութերի ժողովածու*, Եր., 2007, էջ 2:

տարբերակման համար, ինչը փորձում էին անել հունաբան և լատինաբան դպրոցի ներկայացուցիչները:

Առաջադիր հարցի տեսանկյունից ուշադրության է արժանի հատկապես (կանանց) անձնանունների քննությունը, նրանց իմաստների ու կազմության յուրահատկությունների դիտարկումը, ինչպես լեզվի նախորդ շրջաններում, այնպես էլ այժմ: Նշվեց, որ հայերենը չունի *բնիկ իգական իմաստի արտահայտման ցուցիչ ածանցներ*, բացառությամբ հին շրջանում պարսկերենից փոխառված *-ուհի* ածանցի, որը գործածվել և այժմ էլ գործածվում է «*աղջիկ, կին, իգական սեռի ներկայացուցիչ*» նշանակությամբ սովորական անուններից կազմելով իգական սեռի անուններ:

Մինչ *-ուհի* ածանցի փոխառումը, հին հայերենում իգական անունների կերտման գործում ակտիվ է եղել *դուխտ* բառը, որ նշանակել է *դուստր, աղջիկ*: Այս արմատը ևս փոխառություն է, հավանաբար, պահլավերենից կամ պարսկերենից, քանի որ այդ երկուսում էլ ունի նույն *dux* ձևը, այդ ձևն է նաև քրդերենում: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, այդ լեզուներում նույնպես այս արմատը «ճիշտ նման հայերենի՝ գործածում է *իգական հատուկ անուններ* շինելու համար»³:

Եթե սկզբնական շրջանում *Մահակադուխտ, Շահանդուխտ, Որմիզդուխտ, Վարազդուխտ, Վարդանդուխտ* և այլ անուններում այս արմատը պահպանում էր իր հիմնական, այն է *Մահակի՝ Շահանի՝ Որմիզդի՝ Վարազի՝ Վարդանի դուստր* իմաստը, ապա ժամանակի ընթացքում բառիմաստի մթագնման հետևանքով բառը ձեռք է բերել ածանցային իմաստ, որը կցվելով արական սեռի անուններին՝ դրանցից կերտել է իգական անձնանուններ՝ *Ջրվանդուխտ, Միհրանդուխտ, Մանդուխտ, Քույրիդուխտ* և այլն: Սակայն, եթե համեմատելու լինենք այս երկու իգականակերտ ցուցիչները, կտեսնենք հետևյալ տարբերությունները:

1. *Չուխտ* արմատը կամ ածանցը այժմ անկենսունակ, քարացած ձև է, որ պահպանվել է միայն հնակազմություններում, *ուհի*-ն կենսունակ է նաև այսօր:
2. *Չուխտ*-ը ավելացել է միայն տղամարդկանց անձնանունների վրա՝ դրանցից կերտելով իգական անձնանուններ, այնինչ՝ *ուհի* ածանցը իգական սեռի անուններ է կերտում.

ա) արական սեռի անձնանուններից իգական սեռի անձնանուններ՝
Տիզրան – Տիզրանուհի Արմեն – Արմենուհի

բ) որոշ ածականներից իգական սեռի անձնանուններ և անվանումներ՝
սուրբ – Սրբուհի և սրբուհի (սուրբ կին նշանակությամբ)
ազնիվ – Ազնվուհի և ազնվուհի (ազնիվ կին նշանակությամբ)

գ) ցեղանուններից կամ ազգերի անուններից իգական սեռի անուններ՝
լեն – լենուհի; հայ – հայուհի; թուրք – թրքուհի; իտալացի – իտալուհի

դ) անձի զբաղմունք, վիճակ, մասնագիտություն ցույց տվող կամ միջանձնային հարաբերություններ արտահայտող հասարակ անուններից իգական սեռի հասարակ անուններ՝

<i>գեղջուկ – գեղջուհի</i>	<i>խոհարար – խոհարարուհի</i>
<i>ուսուցիչ – ուսուցչուհի</i>	<i>բարեկամ – բարեկամուհի</i>
<i>նկարիչ – նկարչուհի</i>	<i>իշխան – իշխանուհի</i>

Քննվող հարցի տեսակետից առավել ուշագրավ են *հայերեն ազգանունները*, որոնց հիմքը գերազանցապես *տղամարդկանց /արական սեռի/ անվանումներն* են՝ *-յան* վերջավորության հավելումով: Ինչպես՝ *Արսենյան, Դանիելյան,*

³ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, հ.1, Եր., 1971, էջ 682:

Հակոբյան, Հովհաննիսյան, Կիրակոսյան և այլ: Հանդիպում են նաև տղամարդկանց /արական սեռի/ անվանում՝ -ունց, -ունի. *ինչպես՝ Մաքունց, Թոխունց, Աստունի /Աստվածատուր <աստ + ունի, բայց նաև՝ Աստոյան (ՏԱ, ՀԱԲ, էջ25)/*, ինչը այնքան էլ տարածված չէ, այլ որոշակի հատվածի (Տավուշ, Արցախ և սահմանամերձ մի շարք բնակավայրերի) բնակչության ազգանուններում ենք հանդիպում: Ռուսաստանաբնակ հայերի շրջանում առավել տարածված է *-յանց* վերջավորությունը. *Մանուկյանց (ՏԱ, ՀԱԲ, էջ25), Հեքիմյանց //Հեքիմյան(ՏԱ, ՀԱԲ, էջ 201)/*: Իհարկե, ասվածը չի բացառում, սակայն, այլ հիմքերով ազգանունների գոյությունը, քանի որ ազգանվան հիմք կարող է լինել մարդու *մասնագիտությունը կամ զբաղմունքը, բնակչության վայրը, մականունը* և այլ անվանումներ, *կոչումներ և հանգամանքներ*, ինչը, սակայն, մեր ուսումնասիրության նպատակից դուրս է:

Քննարկվող հարցի տեսանկյունից ուշագրավ հանգամանք է այն, որ *մասնագիտություններից ազգանվան հիմք* են հանդես գալիս գերազանցապես *տղամարդու զբաղմունք*, մասնագիտություն հանդիսացողները, որոնք, ժամանակակից աշխարհի գոբալացման արդյունքում գուցե դարձել են նաև կանացի զբաղմունք, բայց կոնկրետ ազգային-ազգագրական աղբյուրների տվյալներով, հասարակական ընկալմամբ բնորոշ են եղել արական սեռի ներկայացուցիչներին, ու էական չէ՝ արմատը բնիկ հայեցի, թե փոխառյալ ձև է: Այսպես *Սւք/կ/արյան/Ասրար՝ ար., արար.«գինվոր» + յան***, *Դարբինյան, Դուրգարյան, Կոշկակարյան* և այլն: Այս իրողությունը ազգային խոր արմատներ ունի և պայմանավորված է հայ իրականության մեջ տղամարդու դերի առաջնայնությամբ ու կարևորությամբ: Ընտանիքը փոքր հասարակություն է, հայ ընտանիքի գլուխ կանգնած է տղամարդը: Այս գաղափարն արտահայտված է նաև հայկական առած-ասացվածքներում, թեև վեր խոսքերում */Տղամարդը գլուխն է, կինը՝ պարանոցը* և այլն/: Հայ հասարակությունն իր անդամներին «խմբավորում» ու «ճանաչում» է ազգի հիմնադիր մեծի /տղամարդ ավագի/ անունով, որի անունով էլ կոչվում է տոհմը. *Կիրակոսենք, Մկրտիչենք և այլն:* Գյումրեցին /ինչպես նաև լոռեցին, դիլիջանցին և այլն/ նման դեպքերում կհարցնի՝ «*ն՝մոնցեն ես*», այսինքն՝ *ն՝ր/ի/կամ ն՝մ* տոհմից ես: Ասվածը, սակայն, չի բացառում *իգական անձնանուն, իգական սեռին բնորոշ մասնագիտության, մակդրային և այլ հիմքով ազգանունների գոյությունը հայերենում*: Օրինակ՝ *Աստղիկյան /Աստղիկ՝ իգ.բնիկ, ԺԵ դ. + յան****, *Թամարյան /իգ.հինհր. «արմավենի» Ժ դ./, Մանասյան /Մանամ իգ. արար.՝ «պատկեր, գեղեցկություն, սիրուհի», ԺԴ դ. + յան/, Մանուշակյան/մանիշակ՝ ծաղկանուն + յան /ԺԴ, հետագայում արդեն սրանից առաջացել է Մանուշյան-ը՝ Մանուշակյան> Մանուշակ> Մանուշ՝ ԺԶ դար* և այլն: Այս և նման օրինակներում որպես ազգանվան հիմք հանդես եկած կանացի անուններից ու անվանումներից կարելի է եզրակացնել, որ այն կանանց կամ իգական սեռի ներկայացուցիչների անուններն են դարձել ազգանվան հիմք, որոնք էական դեր ու նշանակություն են ունեցել հայ իրականու-*

* Տե՛ս Ավետիսյան Տ., *Հայոց անձնանունների բառարան*, Եր., 2000, էջ 25:

** Նույնը:

*** Նույնը:

* Նույն տեղում, էջ 127, 309, 225:

թյան մեջ, հասարակական-քաղաքական կյանքում՝ սկսած դեռևս վաղնջական շրջանից /ինչպես *Աստղիկ դիցուհու, Թամար թագուհու* անունները և այլն/:

Ասվածը փաստում է, որ հայերենում անուն-ազգանունների մեջ արտահայտվող սեռային տարբերակվածությունը ինքնանպատակ կամ պատահական դրսևորման արդյունք չէ, այլ ունի ազգային ու մշակութային խոր արմատներ և պայմանավորված է ժողովրդական մտածողությամբ, հասարակական կյանքի ներքին կառուցվածքի օրինաչափությամբ ու տրամաբանությամբ:

ОТОБРАЖЕНИЕ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ РОДА В АРМЯНСКИХ ИМЕНАХ И ФАМИЛИЯХ

___ *Резюме* ___

___ *А. Авагян* ___

В армянском языке нет грамматической категории рода, но его принадлежность к индоевропейским языкам и, являясь отдельным языковым направлением, не исключается, что раньше эти категории были. Для выражения естественного пола существуют разные средства, которые условно можно разделить на две группы: словообразовательные (*-նիհի*, в древности также *ընիսի* аффиксы) и семантические (семантическая группа слов в соответствии со своим типом и родом как *կուլ – ցուլ, եղ* и т.д.). В армянском языке только одна группа – по значению слова: женщина (девочка) и мужчина (мальчик).

Исследование собственных имен (женских) показывает, что армянский язык не имеет аффиксов, показывающих на принадлежность к женскому полу, за исключением *-նիհի* аффикса, заимствованного с персидского языка, который из обычных слов образует имена женского рода. Основа армянских фамилий в основном имена мужчин с добавлением *-յան* (-ян) окончания (*Арсенян, Киракосян* и т.д.), иногда *-նւնց* (-унц), *-նւնի* (-уни) или *-յանց* (-янц) окончаний, как *Сакунц, Астуни, Астойн, Манукянц*. Данное явление обусловлено приоритетом и важностью мужчин в армянской реальности. Из специальностей основами для фамилий являются только увлечения мужчин. Например, *Дарбинян, Кошкакарян* и др.

Иногда встречаются фамилии, основы которых являются женские имена (*Астхикян, Тамарян, Санамян, Манушакян/Манушян* и др.), а также названия цветов. Между прочим, основы для фамилий стали имена тех женщин, которые сыграли существенную и важную роль в жизни Армянского народа. *Астхик* – имя графини в основе фамилии *Астхикян, Тамара* – имя королевы в основе фамилии *Тамарян* и др.

Итак, в именах и фамилиях армянского языка, выражающих половую разницу, имеют национальные и культурные глубокие корни и обусловлены национальным мышлением, восприятием и воображением народа, структурой внутреннего мышления общественной жизни.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավագյան Արմենուհի Արամուշի - Բ.գ.թ., դոցենտ, Մ. Նալբանդյանի անվան ԳՊՄԲ հայոց լեզվի ասֆիլն, E-mail: arm5_83_7@mail.ru